

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵԱՏՄ և ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏՔԱՏՈՒՄ*

Շուշան Զիրոյան

Բանալի բառեր՝ Եվրասիական տնտեսական միություն, Եվրամիություն, Միասնական տնտեսական տարածք, տնտեսական ինտեգրում, անդամակցություն, համագործակցություն:

Եվրոպական միության հետ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն է: Անկախությունից ի վեր ԵՄ հետ համագործակցությունը մեծապես նպաստել է Հայաստանում տնտեսության, արդարադասության, պետական կառավարման ոլորտներում բարեփոխումների հրականացմանը, ժողովրդավարական հասարակության կայացմանը, մարդու իրավունքների և ինմանարար ազատությունների պաշտպանությամբ գրավվող ինստիտուտների ամրապնդմանը: ՀՅ և ԵՄ միջև համագործակցությունը դեռևս կանոնակարգվում է 1996թ. ստորագրված և 1999թ. ուժի մեջ մտած «Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով» [1]:

2013թ. սեպտեմբերի 3-ին հայտարարվեց Հայաստանի Հանրապետության Մաքսային միություն մտնելու, այդ նպատակներով անհրաժեշտ գործնական քայլեր ձեռնարկելու, իսկ այնուհետև Եվրասիական տնտեսական միության կազմավորմանը մասնակցելու Հայաստանի Հանրապետության որոշման մասին[2]: 2014թ. մայիսի 29-ին Եվրասիական տնտեսական խորհրդի բարձրագույն միստում Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրների նախագահները ստորագրեցին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մասին պայմանագիրը, որն ուժի մեջ մտավ 2015թ. հունվարի 1-ից[3]: ԵԱՏՄ-ն ստեղծվել է Բելառուսի, Ղազախստանի ու Ռուսաստանի Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա: Մաքսային միությունը սկսել է գործել 2010թ. հունվարից, իսկ 2011թ. դեկտեմբերին որոշում է կայացվել Միասնական տնտեսական տարածքը ծևակորող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու մասին: Հայաստանի Հանրապետության ԵԱՏՄ մասին պայմանագրին միանալու փաստաթուղթը ստորագրվել է 2014թ. հոկտեմբերի 10-ին և ուժի մեջ մտել 2015թ. հունվարի 2-ին, Ղազախստանը միացավ ԵԱՏՄ-ին 2015 թ-ի մայիսի 29-ին[4]:

ԵԱՏՄ-ն ստեղծվել է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, համագործակցության, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացման ուղղված կայուն զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով: ԵԱՏՄ-ում ապահովում է ապրանքների, ծառայությունների, կապահովության և աշխատումի ազատ տեղաշարժը, ինչպես նաև համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության վարումը տնտեսության ոլորտներում՝ ԵԱՏՄ պայմանագրի դրույթներին համապատասխան[5]:

ԵԱՏՄ-ին անդամակցությունն այլևս անհնար դարձեց ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաև դրա մաս հանդիսացող խոր և համապարփակ ազատ առևտորի գոտու (ԱՇ/ԽԱՍԳ) համաձայնագիրը չստորագրելու մասին Հայաստա-

* Հոդվածն ընդունվել է 25.10. 18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀՊՏՀ Կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնի ղողենտ, տ.գ.թ., Գ.Ս. Զատիճյանը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Այ 2013թ. սեպտեմբերի 3-ի որոշմանը՝ Հայաստանը և ԵՄ շարունակում են քաղաքական և առևտորային երկխոսությունն այն ոլորտներում, որտեղ այս երկխոսությունը համադրելի է Հայաստանի ԵԱՏՄ-ից բխող նոր պարտավորությունների հետ[6]: Այսպիսի որոշում ընդունելու հետ կապված մեկնաբանությունները խստ տարբեր են: ԵՄ ներկայացուցիչները պնդում էին, որ Հայաստանը վերջին պահին որոշեց չստորագրել Ասոցացման և Խոր և համապարփակ ազատ առևտորի գրուու պայմանագիրը Եվրոպական միության հետ[7]: Խնդիրն այն չէր, որ Հայաստանը ցանկանում էր կամ նախընտրում էր աշխարհաքաղաքական այս կամ այն միավորումը, այլ անվտանգության հրավիճակը, որը ծևավորվել էր իր շուրջը: Ակզբանական շրջանում հայկական կողմն առաջարկում էր Վիլնյուսի գագաթաժողովում ստորագրել Ասոցացման համաձայնագրի «քաղաքական մասը» փաստաթրից հանելով Խոր և համապարփակ ազատ առևտորի գրուու վերաբերող դրույթները, սակայն դա հնարավոր չէ, ԵՄ հետևողական դիրքորոշումն այն է, որ քաղաքական ասոցացմանը և տնտեսական հիմնեգրացումը պետք է առաջ ընթանան միաժամանակ՝ հանդիսանալով Ասոցացման համաձայնագրի անբաժանելի մասերը, և հնարավոր չէ առանձնացնել համաձայնագրի այս երկու կարևորագործ բաղադրիչները:

2015 թվականի դեկտեմբերի 7-ին Բրյուսելում ազդարարվեց Հայաստանի և Եվրոպական միության միջև նոր իրավական շրջանակային փաստաթրի շուրջ բանակցությունների մեկնարկը[8]: Փաստաթուղթը ստացավ «Համապարփակ և ընդայնված գործընկերության համաձայնագիր» անվանումը: Նոր համաձայնագիրը հիմնված էր նախքան Վիլնյուսի գագաթաժողովը բանակցված Ասոցացման համաձայնագրի վրա և Ասոցացման համաձայնագրով նախատեսված բոլոր գլուխները տեղ գտան նոր համաձայնագրում: Նոր համաձայնագիրը չի կարող պարունակել արտոնյալ առևտորային համակարգի մասին դրույթ, քանի որ Հայաստանը մաքսերի հաստատման գործառույթը փոխանցել է Եվրասիական տնտեսական միությանը, այնուամենայնիվ, մյուս, այդ թվում՝ ոլորտային համագործակցության և տնտեսության վերաբերյալ գլուխներում հավանաբար կապահպանվի նախկինում բանակցված բովանդակությունը: Նորացված համաձայնագիրը ընդայնելու է ԵՄ-Հայաստան հարաբերությունների շրջանակը՝ հաշվի առնելով երկու կողմերի նոր գլորալ, քաղաքական և տնտեսական շահերը: ՀՅ կարող է ԵԱՏՄ անդամ լինել և առանձին համաձայնագրեր ունենալ ԵՄ հետ: Քանի որ անդամակցությունը ԵԱՏՄ-ին ենթադրում է առևտորային քաղաքականության միքնիշխանության գիծումը ԵԱՏՄ-ին, միակ անհնարինությունը վերաբերում է ԵՄ-ի հետ այնպիսի փաստաթուղթ ունենալուն, որը կներառեն հասուլ պայմաններ առևտորի համար:

2018թ. ապրիլի 11-ին ՀՅ ԱԺ միաձայն թվեարկությամբ վավերացրեց համաձայնագիրը[9]: Ազատ առևտորի համաձայնագիրը հիմնված էր այլ տրամաբանության վրա, դա տնտեսությունների մերձեցման տրամաբանությունն էր, որը ենթադրում էր, որ համաձայնագիրը կմքող երկրները ավելի են մոտենալու Եվրամիությանը, այդ թվում իրենց տնտեսական և առևտորային հարաբերություններում: 2018թ. հունիսի 1-ից, համաձայն ՀՀԳՀ 385-րդ հոդվածի դրույթների, սկսվել է Համաձայնագրի ժամանակավոր կիրարկումը[10]:

ԵՄ իրավական դաշտը (EU aquis) երաշխավորում է ԵՄ օրինական համակարգը այն փաստի միջոցով, որ այն ընդգրկում է այն ամենը, ինչը ծեռք է բերվում ԵՄ-ի ներսում՝ նույնիսկ իրավական համակարգից դուրս: Հիմնականում ԵՄ իրավական դաշտը կարելի է դիտարկել որպես մի շարք գործիքների ամբողջություն, որոնց տիրապեսում է ԵՄ-ն ներքուստ և արտաքուստ: Քննադատները բնութագրում են ԵՄ որպես առողջ օրգանիզմ[11]: ԵՄ իրավական դաշտը աստիճանաբար դարձել է ԵՄ 3-րդ երկրների հետ հարաբերությունների կարգավորման ամենակարևոր գործիքներից մեկը՝ սկսած նրանց հնարավոր անդամակցության գործընթացից: Վերջապես, ԵՄ իրավական դաշտը մեծացրել է իր սույն իրավական կոնցեսուր և օգտագործվել որպես քաղաքական, սոցիալական և պատմական կոնտեքստ: Այս տեսակետն են կիսում շատ Եվրոպական գիտնականներ: Ժիալդիմիո[12], Ուեքերիլը[13], Նելկորտը[14] և Ազուալի[15] շեշտադ-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

րել են ԵՄ իրավական դաշտի դիմամիկ բնույթը՝ իր իրավական կոնտեքստի մերքո: Կլեմագերը և Եվերտոնը[16] քննարկել են ԵՄ իրավական դաշտի ավելի լայն հասկացությունը՝ ընդգրկելով ԵՄ համակարգի ներսում իրական և պոտենցիալ իրավունքները: Վիճները[17] ավելի խոր ուսումնասիրեց այն «ներառական դաշտի» թերիան ապացուցելու համար, որն ընդգրկում էր պրակտիկաներ, քաղաքականության օբյեկտներ և ոչ ֆորմալ գաղափարներ և արժեքներ: Դանիացի գիտնական Մորթելմանը[18] բնութագրել է ԵՄ իրավական դաշտը որպես քաղաքական կոնցեպտ, և հստակ առանձնացրել է այս ԵՄ-ի օրենքների հիմնական սկզբունքներից: Այս տեսակետը մասնակիորեն լրացնում է բացը և բացահայտում է ԵՄ իրավական դաշտի տեղական և միջազգային այլ կազմակերպություններ արտահանման ֆեմուննը:

ԵԱՏՄ իրավական դաշտը համեմատաբար, իհարկե, երիտասարդ է և դեռ մշակման մեծ ծանապարհ կանցնի իր գործունեության ընթացքում: Ինչպես ազգային, այնպես էլ ինտերագիոն ողջ միջավայրի վստահելի իրավական դաշտի առկայությունը տնտեսական և առևտորային հարաբերությունների զարգացման կարևոր երաշխիք է:

ԵՄ հիմնադիր պայմանագրերը հիմնված են ԵՄ իրավական դաշտի վրա (ԵՄ acquis): Նման կերպ ԵԱՏՄ պայմանագրի գոտվում է ԵԱՏՄ-ի օրինական դաշտի կենտրոնում: Որպես երեք հիմնադիր երկրների (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան) արտադրանք, որը ոչ վաղ անցյալում Ռուսական ինպերիայի և Խորհրդային միության մասն էր, ունեն նմանատիպ իրավական համակարգ: Նետնարար, ԵԱՏՄ պամանագրի չի կարող կրել «իրավական դաշտ» կամ համընդիհանուր արժեքներ հասկացությունը, բայց կենտրոնացնում է ԵԱՏՄ բոլոր իրավական համակարգը մեկ նորմատիվ կոնցեպտի «Միության օրենքներ»-ի մեջ[19]:

Նարկ է ընդգծել, որ ԵԱՏՄ-ի մասին «Պայմանագրի 4-րդ հոդվածում՝ «Միության հիմնական նպատակները», նշված է, որ միության հիմնական նպատակն է ոչ միայն ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորումը, այլև ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացումը, կոռպորատուր և մրցունակության բարձրացումը: Փաստորեն, «Պայմանագրում նշվում է տնտեսության զարգացմանը նպաստելու անհրաժեշտությունը՝ զգալիորեն ավելի արդյունավետ սցենարով:»

Նետեսական վերլուծություն կատարելու համար պետք է վերլուծել երկու կողմերի հնարավորությունները, ներուժը և տնտեսական առաջարկները՝ ՀՀ-ին:

Երբ համեմատում ենք ԵՄ-ն և ԵԱՏՄ-ն տարածքային և բնակչության քանակի առունուվ, ապա պետք է փաստել, որ ԵՄ-ն բնակչության թվաքանակի առունով գերազանցում է ԵԱՏՄ-ին՝ իր 508 միլիոն բնակչությամբ, որը աշխարհի ամենամեծ բնակչությունն է Չինաստանից և Չինակաստանից հետո[20]: ԵԱՏՄ բնակչությունը կազմում է 182,7 միլիոն մարդ, որն աշխարհի բնակչության 2,5 տոկոսն է[21]: Զբաղեցված մակերեսով ավելի մեծ է ԵԱՏՄ-ն, այն զքաղացնում է աշխարհի 15 տոկոսը՝ 20.229.248 քառակուսի կիլոմետր: ԵՄ-ի ընդհանուր տարածքը կազմում է 4.475.757 քառակուսի կիլոմետր: ԵԱՏՄ հանդիսանում է ՀԱՀ-ի չափով 6-րդը (համաշխարհային ՀԱՀ-ի 3,2 տոկոսը)[22], իսկ ԵՄ-ն հանդիսանում է աշխարհի ամենամեծ քլորը[23]:

1992 թվականից ի վեր Հայաստանին տրամադրվող ԵՄ աջակցության ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 800 մլն եվրո: Հայաստանի առևտորի ընդհանուր ծավալի 23.6%-ը բաժին է ընկնում ԵՄ-ին: ԵՄ-ն նաև Հայաստանի ամենամեծ արտահանման շուկան է՝ 28.6% մասնաբաժնով /2017թ./: Ներմուծումների առունով ԵՄ-ը երկրորդն է՝ 22%[24]:

2003թ. ԱՐԿ անդամակցությունից հետո Հայաստանի ապրանքաշրջանառությունը դեպքի Եվրոպա և ԱՍՍ ածեց: Ներմուծումը ԵՄ երկրներից 2013 թ. կազմել է ՀՀ ներմուծման 26,4 %-ը, ԱՊՀ երկրներից՝ 29,7 %-ը: Թեև 2010-2013 թթ. ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում ԵՄ երկրների բաժինը 48,3-ից նվազել է մինչև 33,4 տոկոսի, այնու-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

հանդերձ 2013 թ. այն ավելի բարձր էր, քան ԱՊՀ երկրներինը (27,1%)[25]: Ավելացել է նաև դեպի ԵՄ կատարվող արտահանումը, ինչը նախ և առաջ կապված է գումավոր մետաղների գների էական աճի հետ: Գումավոր մետաղների հանքաբարի, այլումինի թերթերի, ֆերոಡուլվածքի արտահանումը դեպի ԵՄ կազմում է արտահանման բացարձակ մասը: Պղնձի գինը 2016-17թթ. բարձրացել է՝ 4400 դոլարից հասնելով 7000-ի՝ մեկ տոննայի դիմաց[26]:

2018թ. առաջին եռամյակում արտահանումը կազմել է 596 մլն դոլար, որը 34.3%-ով ավելին է, քան 2017թ. առաջին եռամյակի նույն ցուցանիշը[27]: Արտահանումը դեպի ԵԱՏՄ երկրներ աճել է 47.6%: Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության ժամանակ արտահանումը աճեց մոտ 50%, ինչը կարևորագույն գործոն է ՀՀ տնտեսության մրցունակության աճի ԵԱՏՄ անդամակցության պայմաններում[28]:

2005թ. հուլիսից ի վեր ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված համակարգ» (GSP) ռեժիմի շրջանակներում Հայաստանը օգտվում է ԵՄ «GSP» Կանոնակարգի կայուն զարգացման և լավ պետական կառավարման հասուլ խրախուսական դրույթներից՝ այսպես կոչված «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգ» (GSP+) ռեժիմից: «GSP+» ռեժիմը հնարավորություն է տալիս հայ արտահանողներին արտոնյալ պայմաններով մուտք գործելու ԵՄ շուկա՝ ապահովելով շուրջ 6400 ապրանքատեսակների արտահանումը դեպի ԵՄ շուկաներ գրոյական մաքսատուրքերով: 2016թ. տվյալներով՝ «GSP+» ռեժիմի միջոցով Հայաստանի արտահանումը ԵՄ կազմել է 108 մլն. եվրո[29]:

Չնայած Ռուսաստանի համերական աշխատամիջոցների կիրառումը ԵՄ-ի կողտ դիրքորոշման արդյունք էր Ռուսաստանի նկատմամբ, այն հանգանաքը, որ ԵՄ որևէ պարագայում չի ներգրավվի զինված գործողություններում, ԵՄ փափուկ նպատակադրումն է[30]:

Եվրասիայի տարածքում ռեգիոնալիզացիան ավելի աղեկվատ տնտեսական քաղաքականություն է դառնում, քան զլորալիզացիան: «Միասնական տարածաշրջանային տնտեսության» ձևավորումը ենթադրում է ոչ միայն միասնական կառավարման մարմինների ձևավորում և եվրասիական ինտեգրացիայի մասնակից երկրների գործողությունների կողրդինացում, այլև բոլոր ազգային տնտեսությունների տեղափոխում նոր ուղղությունում վրա դրանց վերակողմնորոշում դեպի ներքին եվրասիական շուկա[31]:

ԵԱՏՄ-ի կարևորագույն առավելություն է համարվում նաև աշխատուժի ազատ տեղաշարժը և ավելի էժամ էներգառեսուլրաների գները: Հաշվի առնելով մեծաքանակ հայ աշխատուժի առկայությունը ԵԱՏՄ երկրներում, մասնավորապես Ռուսաստանում և նրանց կողմից ՀՀ հոսող տրանսֆերտների գգալի քանակը, սա շատ կարևոր է ՀՀ տնտեսության համար: Աշխատուժի մեջ հոսքը ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդակներ: Օրինակ՝ Ռուսաստանի տնտեսության յուրաքանչյուր անկում, բնականաբար իր ազդեցությունն է ունենում նաև ՀՀ հոսող տրանսֆերտների վրա՝ հետևապես նաև ՀՀ տնտեսության վրա: Դրա վառ օրինակն է Ռուսաստանի հանդեպ պատժամիջոցների կիրառումից հետո ստեղծված տնտեսական իրավիճակը և դրա բացասական ազդակները ՀՀ-ին:

Հայաստանը գազ ստանում է 1000մ³-ը 150 դոլարով[32]: Ընդ որում, գազի գինը տարածաշրջանում կազմում է 180-190 դոլար: Հաշվի առնելով այն, որ Հայաստանը տարեկան սպառում է մոտավորապես 2 մլրդ մ3 գազ (2017թ. 1.996 մլրդ մ³, աճ 7%)՝ էֆեկտը կազմում է 70 մլն դոլար: ԵԱՏՄ-ի մասին պայմանագիրը ստորագրելիս գազի գինը կազմում էր մոտ 400 դոլար 1000մ³-ի դիմաց, իսկ Հայաստանի համար գինը 270 դոլարից իշեցվեց մինչև 189 դոլար[33]: Ի համարում այս ամենին՝ նշեմք, որ ԵԱՏՄ-ին անդամակցելու կողմնակիցները նշում են այն փաստը, որ եթե Հայաստանը ԵԱՏՄ անդամ չլիներ, ապա Ռուսաստանից Հայաստան ներմուծվող գազի գինը կրաքրանար:

2015 թվականին՝ ԵԱՏՄ-ին միանալու առաջին տարում, Հայաստանի տնտեսա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՀԾՏՎ ՀԱՄԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

կան մի շարք ցուցանիշներ ամելում գրանցեցին: Այդ տարին նաև Ողուսաստանի տնտեսական վիճակի վատթարացման շրջան էր՝ պայմանավորված երկրի նկատմամբ արևմուտքի կիրառած պատժամիջոցներով, նավթի միջազգային գների ամենամը: Մասնավորապես 2015թ. Ողուսաստան արտահանման ծավալները (244 893 հազար դոլար) կրծատվեցին 2014թ. (308 250 հազար դոլար)՝ 2013թ (334 126 հազար դոլար) համեմատ[34]:

Տնտեսական ինստեգրման մեկ այլ ոլորտ է մակրոտնտեսական և արժութային քաղաքականությունը, որը աչքի է ընկնում որոշ խնդիրներով, որոնք, ամենայն հավանականությամբ, կշարունակեն այդպիսին մնալ առաջիկա մի քանի տարիների ընթացքում: Խնդիրների շարքին են դասվում դրայիթզացիայի բարձր մակարդակը, տարբեր արժութային ռեժիմների առկայությունը, արժույթների փոխանակման անկայուն տոկոսադրույթները, գնածի անկայուն տեմպերը: Եշված գործնները բերում են ԵԱՏՄ երկրների միջև առևտորի քանկացմանը և ասիմետրիկ շոկերի առաջացման հնարավորույանը: Պարտքի կայուն սուվերեն կրիտերիան, ինֆլյացիան և բյուջեի դեֆիցիտը չեն ուղեկցվում կիրառման մեխանիզմներով, որը միության համար նույն ռիսկն է, ինչ տեղի ունեցավ Եվրագուու հետարարութի ծզնաժամի ժամանակ, քանի որ այս բոլոր չափորոշիչները խախտվել են առնվազն մեկ երկրի կողմից: Այդ իսկ պատճառով կարևոր է մերմուծել կոռորդինացված և խիստ մակրոտնտեսական և արժութային քաղաքականություն, որը կբարձրացնի ԵԱՏՄ տնտեսական կայունությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eu>
2. <https://armenpress.am/arm/news/731583/>
3. <http://www.eurasiancommission.org/hy/nac/news/Pages/01-01-2015-1.aspx>
4. <http://www.eurasiancommission.org/hy/nac/news/Pages/02-06-2015-1.aspx>
5. <https://www.mfa.am/hy/international-organisations/6>
6. https://eeas.europa.eu/delegations/armenia_th/10743/%D5%80%D5%A1%D5%B5%D5%D1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%20%D5%B8%D6%82%20%D4%B5%D5%84
7. <https://mediamax.am/am/news/foreignpolicy/22702>
8. <https://www.azatutyun.am/a/27412254.html>
9. <https://www.mfa.am/hy/press-releases/2018/04/11/dfm-na-cepa/8126>
10. <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eu>
11. Loïc Auzolai, “The Acquis of the European Union and International Organisations”, 11(2) European Law Journal (2005), 196-231, at 196. Roman Petrov, Exporting the *acquis communautaire* through EU External Agreements (NOMOS, Baden-Baden, 2011) at 21
12. Curti Gialdino, “Some Reflections on the *acquis communautaire*”, 32 Common Market Law Review (1995), 1089-1121
13. Stephen Weatherill, “Safeguarding the *Acquis Communautaire*”, in T. Heukels / N. Blokker/M. Brus (eds), The European Union after Amsterdam, (The Hague/London/Boston, Kluwer Law International 1998), 153-178, 161-162
14. Christine Delcourt, “The *Acquis Communautaire*: Has the Concept Had Its Day?”, 38 Common Market Law Review (2001), 829-870
15. Loïc Auzolai, “The Acquis of the European Union and International Organisations”, 11(2) European Law Journal (2005), 196-231
16. Horst Krenzler, Michelle Everson, Preparing for the *acquis communautaire*. Report of the Working Group on the Eastward Enlargement of the European Union, October 1998

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԽՈՏՏՈՒ 2019

- (European University Institute, RSC Policy Paper № 98/6), available at <<http://www.eui.eu/Documents/RSCAS/Publications/WorkingPapers/9806p.pdf>>
17. Antje Wiener, “The Embedded Acquis Communautaire: Transmission Belt and Prism of New Governance”, 3 European Law Journal (1998), 294-315
 18. Kamiel Mortelmans, “Community Law: More than a Functional Area of Law, Less than a Legal System”, 1Legal Issues of European Integration (1996), 23-48
 19. ԵԱՏՄ պայմանագրի 6-րդ հոդվածը: Միկնույն ժամանակ Հայաստանի ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրի 6-րդ հոդվածում կիրառվում է, ԵԱՏՄ իրավունքը հասկացությունը, որի մաս են կազմում անդամակցության Պայմանագրիը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերը:
 20. https://europa.eu/european-union/about-eu/figures/living_en
 21. <https://data.worldbank.org/indicator/sp.pop.totl>
 22. <http://www.eaeunion.org/?lang=am#about-info>
 23. https://europa.eu/european-union/about-eu/figures/living_en
 24. <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eu>
 25. Տե՛ս՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան, 2014, էջ 545, www.armstatbank.am
 26. <https://b24.am>
 27. <https://armstat.am>
 28. <https://armstat.am>
 29. <https://www.mfa.am/hy/bilateral-relations/eu>
 30. Novaky, Niklas IM, Why so Soft? The European Union in Ukraine, 2015
 31. <https://armedia.am/arm/news/46554/eatm-n-taratsashrjanayin-ev-global-gortsyntacneri-hamateqstum.html>
 32. <http://armenia-am.gazprom.com/press/news/2018/10/1471/>
 33. <http://www.petekamutner.am>
 34. <http://armstat.am>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանը ԵԱՏՄ և ԵՄ հարաբերությունների համատեքստում Շուշան Զիրոյան

Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության հետ կապված եղան բազմաթիվ քննարկումներ և տարածայնություններ: Տարածայնությունների հիմքում հաճախ դրվում էր ընտրության հարցը ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի միջև՝ դրանց տարբերությունների, առավելությունների և թերությունների ենթատեքստում: Այնուամենայնիվ ԵԱՏՄ-ին անդամակցությունն արդեն իրականություն է, և այս պարագայում կարևորագույն խնդիր է առավելագույնս օգտվել միության անդամակցությունից և միկնույն ժամանակ այդ հարաբերություններին գործադրություն նաև փոխչափավետ կապեր ունենալ մեր մյուս գործընկերների հետ՝ այդ թվում ԵՄ-ի:

РЕЗЮМЕ

Армения в контексте отношений ЕЭС и ЕС
Шушан Зироян

Ключевые слова: Европейский Союз, Евразийский Экономический Союз, Единое экономическое пространство, экономическая интеграция, членство, сотрудничество.

Присоединение Армении к Евросоюзу вызвало множество разногласий и дискуссий. В их основе часто лежала проблема выбора между ЕС и ЕЭС, их отличия и недостатки. В статье дается краткий обзор развития отношений между ЕС и ЕЭС, приводятся некоторые сравнительные данные и делаются выводы. Тем не менее, членство Армении в ЕЭС является реальностью, и в этом контексте наиболее важным вопросом является максимальное использование своего членства в союзе и установление взаимовыгодных связей с другими партнерами, включая ЕС.

SUMMARY

Armenia in the context of EEU and EU relations
Shushan Ziroyan

Keywords: Eurasian Economic Union, European Union, Common Economic Space, Economic Integration, Membership, Cooperation.

There have been many discussions and disagreements on Armenia's accession to the EEU. The basis of disagreements was often the issue of choice between the EEU and the EU in the context of their differences, tendencies and shortcomings. The article gives a brief overview of the developments of the EEU - the EU relations basing upon comparisons. Nevertheless, the EEU membership is a fact now, and the most important task is to maximize its benefits and, at the same time, to have mutually beneficial relationship with other partners, including the EU.